ԱՂԱՎՆԻ ԺԱՄԿՈՉՅԱՆ
պատմական գիտ. թեկնածու
ՖՐԻՆԱ ԲԱԲԱՅԱՆ
պատմական գիտ. թեկնածու

ՄԵԼԻՔ ԵԳԱՆԻ ՊԱԼԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՌՈՒՅՑԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ ՏՈՂ ԳՅՈՒՂՈՒՄ

Հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի մեծ գործիչ «Խամսայի մելիքության» բեկլարբեկ մելիք Եգանի պալատական համակառույցը գտնվում է Հադրութի շրջանի Տող գյուղի կենտրոնում եւ բաղկացած է կանգուն եւ կիսավեր մի քանի շինություններից՝ ընդունարանից, գլխատնից, բակում ամփոփված պալատական հյուրասենյակից, թաղակապ երկու սենյակից, ինչպես եւ դրանց դիմահայաց քաղաքային բնույթի բազմաբնակարան կառույցների համակարգից:

Պատմաճարտարապետական տեսանկյունից հուշարձանի վերաբերյալ շրջանառվել են բազմաթիվ հրապարակումներ, թեեւ տակավին կան չլուծված հիմնախնդիրներ, որոնց կարեւորությանը հետամուտ՝ Արցախի Հանրապետության կառավարությանն առընթեր Զբոսաշրջության վարչությունը (վարչության պետ Ս. Շահվերդյան) 2009, 2010, 2011 թվականներին նախաձեռնեց դաշտային ճարտարապետահնագիտական աշխատանքների ծավալումով նոր բացահայտումներ իրականացնելու եւ հուշարձանը վերականգնելով՝ այն զբոսաշրջության կենտրոնի վերածելու գործը:

2009 թվականի պեղումների ժամանակ (ղեկավար՝ Գ. Սարգսյան, ճարտարապետ՝ Մ. Սարգսյան) բացվել է ընդունարանից 18 մ հյուսիս 9,1x10,0 մ չափերով 0,4-0,5 մ բարձրությամբ պահպանված գլխատան մի դահլիճ, որի երեք պատերը նստած են հողի վրա, իսկ ճակատայինը երկշերտ կանոնավոր պատի կառուցվածքով է:

Գլխատան հարավարեւմտյան պատի կենտրոնում՝ հատակի մակարդակին, բացվել է սրբատաշ երեսպատումով կիսաշրջանաձեւ լայն բուխարի՝ երկու կողմում պատրհանախորշ: Գլխատան հատակի երեք անկյուններում պահպանված են փայտե սյուների համար նախատեսված քարե խարիսխներ: Չորրորդի տեղում՝ հատակի մակարդակից 0,45x0,5 նիշի վրա, հետագայում տեղադրվել է կավածեփ թոնիր, որը լցված էր խեցեղեն անոթների բեկորներով: Հատակը տոփանված կավահողով է մշակված: Շինության հյուսիսային

անկյունում սրբատաշ մեծ եզրաքարերով ու լայն շեմի սալաքարերով բացվել է դահլիճի մուտքը: Մուտքի դիմաց՝ 0,5x0,8 հողի մակարդակի վրա, պահպանված է 3,0 մ լայնությամբ եւ 16,0 մ երկարությամբ պատշգամբ-սյունասրահի հարթակը: Իր յուրօրինակ հորինվածքով շինությունը հայկական ժողովրդական ճարտարապետության գլխատան եզակի տիպար է, որն ունեցել է գլխատան համար բնորոշ գերաններից կազմված հազարաշեն՝ գագաթին լուսավորության, ծուխը հեռացնելու եւ օդափոխության համար քառակուսի կամ կլոր անցք (նկ. 2)[1]: Հանրահայտ է, որ գլխատները, աստիճանաբար հավելումներ կրելով, անցել են զարգացման երկար գործընթաց եւ բաղկացած են եղել երեք հիմնական բաժիններից՝ գլխատուն-սրահ-գոմ: Այս պարագայում Տողում բացվածը միայն գլխատունն է ներկայացնում, իսկ մյուս բաժինները ծավալի մեծ մասով, հավանաբար, մնացել են գյուղի բնակիչների կողմից իրականացված կառուցապատումների տակ: Այս գլխատունը կառուցվել է ժամանակի պատմաճարտարապետական ու սոցիալ-տնտեսական պահանջներին համապատասխան: Տեղանքի լանդշաֆտի առանձնահատկությունների հաշվառումով ստեղծվել է հարմարավետ ու գեղեցիկ ձեւավորված, նստակյաց ժողովրդին վայելուչ բնակարանային հորինվածք: Հնագիտական դիտարկումները թույլ են տալիս եզրակացնելու, որ մելիք Եգանին պատկանող ընդունարանի եւ երկհարկանի պալատական համալիրի միջեւ բացված գլխատան փլատակները պատկանում են ավելի վաղ շրջանի, թերեւս, ԺԷ. դ.: Բնական է, որ հետագա դարերում կառուցված նոր ոճի շինությունների կողքին նույն ժամանակաշրջանում գլխատուն չէր կարող կառուցվել:

Այդ է վկայում 2011 թվականի պեղումների ժամանակ բացված գլխատնից ժողովրդական ճարտարապետության անցումը ներկայացնող քաղաքային բնակարանաշինության մի տարբերակ[2]: Շինությունը կառուցված է մելիք Եգանի պալատից 12 մ հարավ: Այն հատակագծում թեթեւակի շեղված ուղղանկյուն պարագծով սրահ է եւ կրում է քաղաքաստեղծման նախնական փուլին բնորոշ շինարարական ատրիբուտները՝ պահարանախորշեր, բուխարի եւ նոր մտահղացմամբ դուռ, լուսամուտ (նկ. 13): Պատերը շարված են երկրաչափական տարբեր չափերի կոպտատաշ տարաբնույթ քարերով: Շինության անհամաչափությունը զգալի է արեւելյան պատի հատվածում եւ արդյունքն է ԺԸ. դարում իրականացրած վերակառուցումների, որի հետեւանքով փակվել էր բուխարին ու դռան բացվածքը: Տեղում պահպանված էր սեյսմակայունության ապահովման համար պատի ակոսում տեղավորված փայտե հեծանը: Մենյակի հյուսիսային պատով մեկ խնամքով կառուցված ու ռիթմիկ դասավորությամբ

1 Տե՛ս ***Ն. Պապուխյան,*** Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը, Երեւան, 1972, էջ 55:

2 2011 թվականին արշավախմբի կազմում էին պ.գ.թ. ***Ա. Ժամկոչյանը***՝ ջոկատի պետ, անդամներ՝ պ.գ.թ. ***Ֆ. Բաբայանը***, ճարտարապետ ***Մ. Մարգսյանը,*** պրակտիկանտներ՝ Անի Կոստանդյանը, Լուսինե Հարությունյանը, Աննա Մարկոսյանը:

մշակված պահարանախորշերը (0,5, 0,55, 0,65, 0,8, 0,49, 0,5 չափերով) ավարտվում են կամարաձեւ քարերի պսակով, որը ոչ մեծ չափերի այս սրահին ընդարձակության պատրանք է տալիս: Սրահին առատ լույս են պարգեւել հարավային պատին 0,10 մ բարձրությունից, իրարից 0,5 մ հեռավորության վրա բացված ուղղանկյան ձեւավորումով դռռն ու լուսամուտը, որոնց հետքերը տեղում ամրագրվեցին: Հավանաբար, շինությունն ունեցել է կիսագլանաձեւ թաղ, իսկ երկթեք տանիքը ծածկվել է կղմինդրով, որոնցից մեկի վրա արձանագրված է՝ 1891 թվական: Սենյակի արեւմտյան պատի հակառակ երեսին ուղղանկյուն հատվածքով զույգ պահարանախորշերի արանքում բացվել է սլաքաձեւ կամարապսակով ավարտվող, ծխանցքով մի բուխարի (նկ. 20): Բնակարանի կառուցման այս եղանակը, երբ սենյակներից մեկի պատն ընդհանուր էր, միանշանակ ունեցել է կոնստրուկտիվ, կենցաղային եւ պաշտպանական նշանակություն (խնայվել է շինանյութը, փոխանցվել է անհրաժեշտ մթերքը, վտանգի պահին բնակիչները արագ հաղորդակցվել են)[3]: Քաղաքային բնույթի բնակարանի կառուցման անհրաժեշտությունը պայմանավորված էր քաղաքական ու սոցիալ-տնտեսական կյանքի արագընթաց փոփոխությունների հանգամանքով, որի հետեւանքով տրոհվում էին մեծ ընտանիքները, եւ փոքր ծավալով բնակարանների կառուցապատումը դառնում էր ժամանակի անհետաձգելի պահանջը: Մյուս կողմից, այլ երկրների հետ ունեցած առեւտրամշակութային կապերով ու մարդկային հարաբերությունների գործոնով պայմանավորված, փոխվում էր տարածաշրջանի կյանքի սոցիալ-տնտեսական բազան՝ առաջացնելով բնակչության շերտավորում: Կար եւ բարեկեցիկ կյանք ստեղծելու թելադրանքը, որ պահանջում էր կենցաղավարման նոր ձեւեր հորինել, հետեւաբար ծագեց հատակագծային որոշակի ծրագրով ու կառուցողական նոր լուծումներով գեղարվեստաճարտարապետական համակարգ ստեղծելու անհրաժեշտությունը: Տողում բացված բազմաբնակարան այս համակարգի մի բաժանմունքի բացահայտումը դրա փայլուն ապացույցն է:

Նախաեգանյան մշակութային շերտագրական հորիզոններն արձանագրվեցին ընդունարանի հարավարեւելյան հատվածում 2010 թվականի պեղումների ժամանակ[4]: Բայց նախ անդրադառնանք մելիք Եգանի պալատական համակառույցի՝ գրեթե անխաթար մնացած ընդունարանին վերաբերող մանրամասներին: Երկհարկանի այս շինության վրա կառուցված հարկաբաժնի (այն դարձել էր եռահարկ) պատերի նոր շարվածքը որոշ շեղումներով երկրորդ հարկի չափերին հարմարեցնելը եւ բուխարու ծխնելույզի փակումը բխում էր ԺԹ. դարի ժողովրդական ճարտարապետության առաջադրած պահանջներից,

3 ***Ն. Պապոյան,*** նշվ. աշխ., էջ 82:

4 (ՀՀԱԱ) Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի ջոկատի կազմը՝ պ.գ.թ. ***Ա. Ժամկոչյան*** (ջոկատի պետ), անդամները՝ պ.գ.թ. ***Ֆ. Բաբայան***, կրտսեր գիտաշխատող ***Դ. Միրիջանյան***, ճարտարապետ ***Մ. Մարգսյան:***

եւ այսօր էլ այսպիսի հորինվածքով շինությունների կառույցները շրջապատում են մելիք Եգանի պալատական համակառույցը: Այս հարկաբաժնի օգտակար գործողության գործակիցն ընդարձակվել էր այն օղակող բարձր ու լայն պատշգամբով, որի հենասյուները տեղում պահպանված են: Այստեղից էր բացվում բնակարանի մուտքը, ու այնտեղ էին նայում լայն ու բարձր պատուհանները: 2010 թվականին այս կառույցը վերացված էր, եւ հնագիտական ջոկատը ընդունարանի տանիքի վրա 0,5-0,6 մ հողաշերտը մաքրելուց հետո բացել է տանիքի նախնական կտուրը: Տեղում ցիրուցան կարմրաներկ, երբեմն թվակիր եւ հայերեն տառեր բովանդակող կղմինդրները վավերացրին տանիքի՝ երկթեք կառուցվածք ունենալու ենթադրությունը:

Հայոց գրերով կամ անուններով կղմինդրներ գործածելը հայկական մշակույթին հարազատ սկզբունք էր տակավին վաղ միջնադարից (Ե.-Թ. դդ.): Դվինում հայտնաբերված կղմինդրների հավաքածոյում կան ոչ միայն արձանագիր, այլեւ Մարիամ Աստվածածինի պատկերով գծագրվածներ: Ավանդույթի ուժով այս գործառույթը, որն ընդունելի է եղել նաեւ Վրաստանում[5], Արցախում, Հայաստանում, շարունակվեց մինչեւ ուշ միջնադար[6]: Մելիք Եգանի ընդունարանը ընդարձակ, թեթեւակի շեղված քառանկյուն հատակագծով (3,65x7,15 մակերեսով) թաղակապ մի դահլիճ է, որի շարունակությունն է թաղածածկ նախասրահը: Այն կառուցված է կոպտատաշ քարերով, ներսից պատերը կրում են կրաշաղախ սվաղ: Սրբատաշ շարվածք ունեն որմնասյուներն ու թաղակիր կամարները: Շքամուտքը կամարակապ է, սրբատաշ քարերով շարված որմին մելիք Եգանի ՌՃՁԶ (1737) արձանագրությունն է, որտեղ հիշատակվում են նրա գործունեության լայն շառավիղները, մելիքական իրավունքներն ու պարտականությունները[7]: Ընդունարանի մուտքի դիմացի պատին օջախ-բուխարին է՝ եզրապատերին հպված երկու պահարանախորշերով: Հարավարեւելյան եւ հարավարեւմտյան պատերին երկուական պատուհաններն ունեն դեպի ներս թեք լայնացող մակերես, իսկ շքամուտքի պատի երկու կողմում կան նեղ գոգավորությամբ պատուհաններ: Վերջիններս, մյուս պատուհանների հետ լուսավորության աղբյուր լինելուց բացի, ծառայել են իբրեւ հրակնատներ: Ընդունարանն ունի նկուղային հարկաբաժին, որի մուտքը նախասրահի տակով թեքությամբ իջնող նեղ թաղակապ միջանցքի եզրին է: 1,5 մ երկարությամբ եւ 0,5 մ լայնքով միակտոր քարի բարավորը հենված է 1,6x0,9 մ չափերով մուտքի վրա: Ընդունարանի մաքրման աշխատանքների ժամանակ նկուղում արձանագրվե-

5 Տե՛ս *Д. Джгамая,* Строительная керамика феодальной Грузии, Тбилиси, 1980.

6 Տե՛ս ***Գ. Ղաֆադարյան,*** Դվին քաղաքը եւ նրա պեղումները, հ. 1, Երեւան, 1952, էջ 249, նկ. 230, էջ 254, նկ. 234:

7 Արձանագրությունը վերծանել է ***Հ. Փափազյանը***: Տե՛ս Մելիք Եգանի ընդունարանի մուտքի վիմագիր արձանագրությունը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1985, թ. 5, էջ 75-78: Տե՛ս նաեւ ***Մ. Բարխուդարյան,*** «Դվին հայ վիմագրության», պրակ V, կազմեց՝ ***Մ. Բարխուդարյան***, Երեւան, 1982, էջ 181:

ցին որոշ մանրամասներ՝ օդամուղ խողովակներ, որոնք հաղորդակցվում են ընդունարանի դահլիճի պատրհանների հետ՝ գաղտնի մնալով շրջապատի տեսադաշտից: Ուսումնասիրությամբ պարզեց, որ դրանք աննկատ միանում են երկրորդ հարկի արեւելյան պատի մեջ եղած ավելի մեծ փակ պատուհանների օդանցքներին: Սա օդամուղ գաղտնալսման հարմարանք է, որը շքամուտքի երկու կողմերի հրակնատների հետ մի նոր որակ է հաղորդում առաջին հայացքից անպաճույճ թվացող շինությանը: Շինարարական յուրահատուկ մտահղացմամբ կառուցված ընդունարանը ճարտարապետական հորինվածքով մի ամբողջություն է՝ ծրագրված որոշակի նպատակների իրականացման համար՝ իբրեւ մելիք Եգանի ընդունարան եւ ռազմական հենակետ, պաշտպանական փոքրիկ աշտարակ-դիտակետ: Ա. Ղուլյանը մելիք Եգանի ընդունարանի հորինվածքը համեմատում է Խնածախի եւ Քաշաթաղի ընդունարանների հետ՝ շեշտելով, որ Տողինը հորինվածքային կառուցվածքով յուրօրինակ տիպաբանական տարբերակ է[8]:

2010 թ. շարունակվեցին աշխատանքները 2009 թ. սկսված ընդունարանի հարավարեւելյան պատից 2,2 մ հեռավորության վրա A-6, B-6, C-6, A-7, B-7, C-7 քառակուսիներում, որտեղ մասամբ բացվել էին չորս հաջորդական թաղակիր կամարներից բաղկացած կառույցի ավերակները(նկ. 1, 3): Կամարները շարվել են թեքությամբ, նեղ, հարթ մակերես ունեցող աղյուսանման քարերով եւ կրաշաղախի կապակցումով: Կամարները նստած են տարբեր լայնություն ունեցող զանգվածեղ ամուր մույթերի վրա: Երրորդ, չորրորդ կամարների հատակի նիշը ճակատային կողմից բացվեց 2,4 մ, իսկ ներսի կողմից՝ 1,4, 1,6, 1,8 մ խորության վրա: Արեւմուտքից երկրորդ կամարի միջի հողը հեռացնելուց հետո վերեւի նիշից 1,4 մ խորության վրա հատակին բացվեց երկու սալաքարերից բաղկացած մի մուտք՝ ներքուստ անկանոն շարվածքի մնացորդներով եւ մոխրի շերտով: Դա կառույցի առաջին շինարարական հորիզոնն էր: Երկրորդը գտնվում էր սալաքարե հատակից 0,5 մ խորության վրա, որտեղ քարակերտ պատի մեջ բացվեց 0,8 մ լայնքով երկրորդ մուտքը՝ հողե տոփանված հատակով: Բացված կամարակապ համակարգը հիմք է հանդիսացել նախաեգանյան շրջանի մի շինության, ինչը, ամենայն հավանականությամբ, կրել է գերանաշար հարթ ծածկ: Վերջինս ունեցել է շինարարական երկու շերտ՝ ԺԳ.-ԺԸ. դդ. թվագրվող տարատեսակ նյութերով, որոնք վերաբերում են մշակութային տարբեր փուլերին: Չի բացառվում, որ ամուր մույթերի վրա կանգնած կամարաշարը հետագայում հենարարան է ծառայել ընդունարանի երկրորդ հարկում կառուցած պատշգամբի փայտե սյուների համար:

Բնակելի այս շինության շարունակության վրա պեղվեց նաեւ անմասշտաբ համաչափության քարերով կառուցած, բայց կանոնավոր հատակագ-

8 Տե՛ս ***Ա. Ղուլյան,*** Արցախի եւ Սյունիքի մելիքական ապարանքները, Երեւան, 2001, էջ 35:

ծով մի կացարան, որ ծավալվում էր C-6 քառակուսու եզրագծում եւ ամբողջությամբ D քառակուսում (նկ. 5, 6): Այս պեղահատվածն էլ ուներ երկշերտ կառուցվածք: Առաջինը հատակագծային որոշակի օրինաչափությամբ մի կառույց է, որի պատերը մշակված են ցածրորակ տեխնիկայով, բայց կրում են որոշակի համակարգով, իրարահաջորդ, տարբեր չափերով կառուցված խոռոչներ եւ ընդերկայնական փորված խոր ակոսի մեջ տեղավորված գերան: Վերջինս որմնագոտու դերակատարություն է ունեցել՝ սեյսմակայուն դարձնելով շենքը երկրաշարժերի ժամանակ: Շինարարական պարզագույն լուծումով կառուցված այս պատն ավարտուն վիճակում 7,4 մ երկարություն ունի, իսկ տարբեր չափերի խոռոչները գտնվում են իրարից որոշակի հեռավորության վրա: Շինությունը սկզբում ծառայել է իբրեւ ձիանոց, բայց գործածությունից դուրս գալուց հետո տեղը հարթեցվել է ու իրականացվել է ճարտարապետական նոր ոճով կենցաղային ու արտադրական որոշակի հարմարություններով մի համակառույցի շինարարություն: Այս շերտում կառուցվել է թաղակիր կամարներից բաղկացած մի բնակարան, որը հենվել է խամքարաբետոնե մույթերի, կամարաղեղների ու տեղ-տեղ էլ մայր հողի վրա (նկ. 4): Շինությունը ունեցել է արտադրական եւ կենցաղային օժանդակ հարմարություններ, որտեղ տեղադրվել է 1,4 մ տրամագծով եւ 0,3 մ խորությամբ թոնիր-հնոց (նկ. 7), վերջինիս շուրջը հայտնաբերվեցին խեցեղենի, ապակու եւ մետաղի արտադրական թափոններ: Հայտնաբերված նյութերը նույնպես ԺԴ.-ԺԶ. դարերին են պատկանում:

Նախաեգանյան տարբեր բնույթի եւ տարբեր գործառույթներով օժտված այս շինությունները թե՛ հնագիտական նյութերով (ԺԴ.-ԺԶ. դդ.), թե՛ տեղանքի կառուցման նիշով համահունչ են, որը կարելի է քննարկել Ս. Հովհաննես եւ Ս. Ստեփանոս եկեղեցիների շուրջ տիրող տարակարծությունների հարթության վրա: Ուսումնասիրողները երկու խմբի են բաժանվում: Մի մասն ընդունում է եկեղեցիների վաղ ծագումը. այդ մասին Առաքել Կոստանյանցը գրում է, որ երբ Ղուկաս վարդապետը եւ իր որդի Եգանը հայտնվեցին Տողում, եկեղեցուն կից բնակության համար կառուցեցին մի շինություն. «Վասն որոյ շինեցին զմի ամրագոյն կամարաշէն սենեակ առընթեր սրբոյ Յովհաննու եկեղեցոյն, վասն ի նմա բնակելոյ Վարդապետին Ղուկասու եւ այլ իւր որդւոյն Եկանայ»[9]: Մ. Բարխուդարյանը եկեղեցին պարզապես «հին» է անվանում[10], իսկ նորագույն ժամանակներում Շ. Մկրտչյանն այն համարում է վաղ բազիլիկ եկեղեցի[11]:

9 **Առաքել վարդապետ,** Դիզակի մելիքութիւնը (նյութեր հայ մելիքության մասին), պրակ Ա., Վաղարշապատ, 1913, էջ 12-13:

10 Տե՛ս **Մ. Բարխուդարյան,** Արցախ, Բագու, 1895, էջ 75:

11 Տե՛ս **Շ. Մկրտչյան,** Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները, Երեւան, 1985, էջ 97:

Հակառակ այս տեսակետներին՝ Ս. Ջալալյանցը եկեղեցին թվագրում է ԺԸ. դարով եւ այն վերագրում մելիք Եգանի շինարարական գործունեությանը. «Ի գաղթելոյ Տաշրաց գաւառք Արդվի գիւղից»[12], միաժամանակ նա նկարագրում է Տողն իբրեւ գյուղաքաղաք եւ իր այցելության ժամանակ հիշատակում 80 տուն հայ բնակիչների մասին: Հավանաբար, նրանից է օգտվել նաեւ Ռաֆֆին, որ եկեղեցին վերագրում է մելիք Եգանի շինարարական գործունեությանը: Խնդիրն այն է, որ Ս. Հովհաննես եւ Ս. Ստեփանոս եկեղեցիները չունեն հիմնադրման վերաբերյալ շինարարական արձանագրություններ, այնինչ՝ վերանորոգումների մասին կան հետեւյալ հիշատակությունները: Ս. Հովհաննեսի ճակատակալ քարին գրված է «Թվին ՌՃՁԵ: (1736): Այս սուրբ Ոհանէս եկեղեցուս գլուխն նորոգեց Ղուկազ վարդապետի որդի Մելիք Եկանն, յիշատակ է հոգոյն իւրոյ. ով կարդայ մեկ բերան Աստուած ողորմի ասէ»[13]: Ս. Ստեփանոս եկեղեցու նորոգումը իրականացրել է մելիք Եգանի որդի՝ Եսային, 1747 թվականին: «Թվին ՌՃՂԶ. (1747) Յիշատակ է ՍԲ Ըստեփանոսի եկեղեցուս գլուխն, որ նորոգեաց Մելիք Եկանի որդի Մելիք Իսային յիշատակ է հոգոյն»[14]:

Համոզված ենք, որ երկու եկեղեցիների շուրջ եղած տարակարծությունները կարելի է վերանայել տեղում կատարվող պեղումների եւ համապատասխան ճարտարապետական ուսումնասիրությունների արդյունքում:

Մելիք Եգանի ապարանքի փոքր մասն է պահպանվել, եղածն էլ վերակառուցումների հետեւանքով կորցրել է իր նախնական տեսքը: Պալատական համալիրի փոփոխված ատրիբուտներից է սրբատաշ քարերով շարված բարձր թաղակապ դարպասը՝ դրսի կողմից ավարտված գեղեցիկ կամարակապ շքամուտքով, որն իրականացված է սրբատաշ քարերով: Շքամուտքի աջ կողմում 1731 թվականի արձանագրությունն է, որը վաղագույնն է համալիրի թվագրված կառույցներից: Դարպասի թաղակապ ծածկով նախամուտքը (նկ. 10) տանում է դեպի բակի խորքում տեղադրված, ուղղանկյուն հատակագիծ ունեցող բնակելի հատվածը (նկ. 12, 17): Վերջինիս ճակատային մասում պահպանվել է. «Բարուն Արամին Թվ [ին] ՌՃՁԶ (1737)» եղծված արձանագրությունը: 50 քառակուսի մետր մակերեսով սրահի ներսում պահպանված են ուշ միջնադարի հայկական ժողովրդական ճարտարապետությանը բնորոշ մանրամասները՝ կենտրոնական պատին օջախ-բուխարի՝ կողքին պատրհաններ, եզրային պատին դուռ, բակահայաց կողմի պատին՝ երեք մեծ պատուհաններ (նկ. 15): Սենյակն ունեցել է փայտե գերաններով ծածկ, իսկ բակի կողմից՝ փայտե սյուներ: Այստեղ պատերին տեղադրված են ավանդական պատրհաններն ու բու-

12 «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան», մասն Բ., Սարգիս Ջալալյանցի աշխատությամբ, Տփխիս, 1858, էջ 259: Տե՛ս նաեւ ***Ռաֆֆի***, Խամսայի մելիքությունները, Երկերի ժողովածու, հ. 10, Երեւան, 1959, էջ 177:

13 «Դիվան հայ վիմագրության», պրակ V, Արցախ, Երեւան, 1982, էջ 177:

14 Տե՛ս անդ:



աղ. 1



աղ. 2



աղ. 3



աղ. 4



աղ. 5



աղ. 6



աղ. 7



աղ. 8



աղ. 9



աղ. 10



աղ. 11



աղ. 12



աղ. 13



աղ. 14

խարին: Քարե սրբատաշ աստիճանները տանում են երկրորդ հարկ (նկ. 9), որի փլատակների միջից գտնվեց հետեւյալ բովանդակությամբ մեկ այլ արձանագրություն. «Այս տունս պատկան է Արամ Բեկ Մելիք Եկանեանցին 1904 մայիս» (նկ. 8, 18): Բակի աջ կողմում թաղակապ, ուղղանկյուն հատակագծով (4,05x5,25 չափերի) երկու սենյակների պատերին կան բուխարիներ ու պատրհաններ, իսկ հատակին՝ թոնիրներ ու մեծ կարասներ (նկ. 11, 14): Լուսավորությունը ներս է թափանցել երդիկից, որը հետագայում շինության վրա երկրորդ հարկ կառուցելու պատճառով փակվել է: Յուրաքանչյուր սենյակում կա մեկական նեղ, դեպի ներս թեք գոգավորությամբ պատուհան: Բակում բացվեցին մթերահորեր, գուցե նաեւ ջրհորեր, ինչպես նաեւ՝ ավելի վաղ շինության քարե սյան չորս խարիսխներ: Վերջիններս մի գծով ձգվում են թ. 1 տնտեսական սենյակի հիմքի տակ: Նոր կառույցների պարագայում, բնականաբար, հները քանդվել են (նկ. 19): Ապարանքի դարպասի աջ կողմում հպված է մեկ այլ ուղղանկյուն շինություն, որն ունի սրբատաշ քարերով եզերված փոքր ծավալի դարպաս: Կառույցը մուտք է ունեցել դեպի բակ եւ հետագայում փակվել է շենքը գոմի վերածելու պատճառով: Շինության հետ կապված մանրամասները ենթադրում են, որ այն կառուցվել է գլխավոր դարպասի եւ տնտեսական սենյակների հետ, ժամանակին ծառայել է իբրեւ պահակատուն: Պեղումներով հետազոտված տարածքը կարելի է համարել մելիք Եգանի ապարանքի մի փոքր հատված: Հետագայում համալիրը բնակիչների կողմից ձեւափոխվել է ու խառնվել նոր կառուցապատումների հետ:

Ս. Ջալալյանը Դիզակ այցելելու ժամանակ պալատը «մեծաշեն» բնութագրումով է հիշատակում[15]: Եթե մելիք Հաթամի երկհարկանի ապարանքը միայն երկրորդ հարկում ունեցել է 15 սենյակ (Մոխրաթաղ)[16], ապա մելիք Եգանինը դրան չէր կարող զիջել, որովհետեւ նա «Խամսայի» մելիքության բեկլարբեկն էր եւ տարածաշրջանում հայտնի էր իբրեւ հզոր կառավարիչ, դիվանագետ, քաղաքական գործիչ ու հմուտ զորավար: Սակայն այս պարագայում հաշվի պիտի առնել քաղաքական իրադրությունը, որը խանգարեց նրանց կառույցները պահպանելուն: Մելիք Եգանի մահից հետո 1744 թվականին նրան մեկ տարի փոխարինած որդուն՝ Արամին, հաջորդեց եղբայրը՝ Եսային, որի կառավարման ժամանակաշրջանը հարուստ է Փանահ եւ նրա որդի Իբրահիմ խաների կողմից նրանց հարստությանը տիրանալու մոլուցքով տարված շարունակական հարձակումներով, խարդավանքներով եւ դավանափոխություն պարտադրելու փորձերով: Ի վերջո, այս ամենը ուծացրին զտարյուն այդ տոհմը, որի ինքնության պահպանման համար ջանքեր չէր խնայել մելիք Եգանը: Դավանաբանական երկու մասի բաժանված բնակչության քրիստոնյա հուսա-

15 Տե՛ս «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան», աշխատութեամբ՝ Սարգսի Ջալալեանցի, մասն Բ., Տփխիս, 1858, էջ 259:

16 Տե՛ս ***Ա.Ղույյան,*** նշվ. աշխ., էջ 63-73:

խաբված հատվածը լքեց իր հայրենի հողը՝ ապաստան գտնելով Ռուսաստանում եւ Լոռիում:

Այս ամենի պատճառով պեղումների ժամանակ չհայտնաբերվեց նրանց ունեցած մելիքական դիրքը հատկորոշող շինությունների ամբողջական համակարգը:

Պեղումներով հայտնաբերված հնագիտական նյութերը. Հայտնաբերված նյութը չնայած քանակով մեծ չէ, բայց կարեւոր նշանակություն ունի տարածաշրջանի բնակչության արհեստագործական արտադրանքի եւ կենցաղավարման մասին պատկերացում կազմելու համար: Ամենամեծ խումբը խեցեղենն է, որը ստորաբաժանվում է հասարակ, ջնարակած եւ հախճապակե տեսակների:

Հասարակ խեցեղենը խոհանոցային բնույթի է եւ օժտված է որակական տարբեր հատկանիշներով: Ձեւերի տեսակետից դրանք փակ (ճրագ, կճուճ, կարաս, սափոր, դեկորատիվ ամանեղեն եւ ծխամորճ) եւ բաց տիպերի են (քրեղա, թաս, խուփ եւ այլն):

Սափորներից մեկը պարզագույն ձեւավորումով դուրս լայնացող, բայց կտրված շուրթ ունի, իսկ պարանոցից սկսվող զանգվածեղ կանթը հանգչում է քիչ լայն իրանի վրա: Պահպանված ծորակի հետքը բնորոշում է անոթի կիրառական նշանակությունը՝ ջրաման (աղ. 2, նկ. 1): Մյուս սափորը քիչ դուրս թեքված շուրթ ունի, որին հաջորդում է նեղ պարանոցն ու աստիճանաբար լայնացող իրանը: Վերջինիս վրա կետազարդերից կազմված զարդագոտիներն ուղղահայաց եւ զուգահեռ դրսեւորումներով են (աղ. 1, նկ. 1): Կետազարդ եղանակով է մշակված եւ խորհրդանշային եղեւնու ծառ հիշեցնող սափորիկի հատակի հատվածը (աղ. 1, նկ. 2): Ուշադրության է արժանի զանգվածեղ սափորը (աղ. 8, նկ. 3), որն ունի կոպիտ մշակում, խեցին զանգվածեղ է, կանթն էլ սկսվում է պարանոցից եւ փոքր թեքությամբ ուղղաձիգ կտրվածքով ավարտվում է լայնացող իրանում: Կանթերի բազմատեսակ ձեւավորումներով դժվար է պատկերացնել անոթների արտաքին ձեւերը, սակայն այն, որ բնակչությունն օգտվել է խոհանոցային անոթների լայն տեսականուց, փաստ է (աղ. 2, նկ. 3, 4, 5, 6):

Խեցեղեն ճրագները քթիկավոր տեսակին են պատկանում եւ լայն գործածություն են ունեցել վաղ միջնադարում(Ե.-Թ. դդ.): Սրանց կիրառությունը որոշ ընդմիջումներից հետո արտաքին ձեւի նոր փոփոխություններով շարունակվել է ԺԵ.-ԺԶ. դդ.: Տողում հայտնաբերվածների խողովակաձեւ երկար քթիկները վերջում ավարտվում են անցքով: Հատակները հարթ են, բռնակները՝ կլոր (աղ. 12, նկ. 1, աղ. 17, նկ. 4): Կճուճների միայն իրանի մասերն են հայտնաբերված: Հիմնական հարդարանքը լայն կամ նեղ գոտիների վրա եղեւնազարդ կամ կետազարդ տարաբնույթ մոտիվներն են (աղ. 13, նկ. 1,2,3,4, 5,6,7,8): Մեծ խումբ են կազմում կարասները, որոնք բեկորային վիճակում են



աղ. 15

աղ. 16

աղ. 17

Նկ. 1

Նկ. 2

Նկ. 3

Նկ. 4

Նկ. 5

Նկ. 6

Նկ. 7

Նկ. 8

Նկ. 9



աղ. 15

աղ. 16

աղ. 17

Նկ. 1

Նկ. 2

Նկ. 3

Նկ. 16

Նկ. 17

Նկ. 18

Նկ. 19

Նկ. 20

հայտնաբերվել (աղ. 3, նկ. 1, աղ. 4, նկ. 2, 3, աղ. 6, նկ. 1, 2, աղ. 9, նկ. 1, 2, աղ. 10, նկ. 1, 2, 3, աղ.11, նկ. 1, 2, 3, աղ. 14, նկ. 2, 3, 4, 5), պսակների բազում տարբերակներով եւ իրանի ուռուցիկ կամ քիչ ձվաձեւ շեղումներով: Զարդերը ներկայացված են պարզագույն լուծումներով՝ մատնեքավոր, կետազարդ ու եղեւնաձեւ մոտիվների իրարահաջորդ գոտիներով: Արժեքավոր է լայն շուրթին դրոշմակնիքով հարդարված կարասի բեկորը (աղ. 17, նկ. 2): Տարբեր ձեւի կարասների գոյությունը Տողում պատահականություն չէ. տարածաշրջանում զարգացած են եղել խաղողագործությունը եւ գինեգործությունը:

Փակ անոթների հավաքածոյում առանձին տեղ են զբաղեցնում ծխամորճերը: Կաղապարների մեջ մանրահատիկ կավից պատրաստված կիրառական նշանակության այս առարկաները հարդարվել են կետերով, գծիկներով, ապա՝ ներկվել: Տողում հայտնաբերված օրինակները (աղ. 1, նկ. 3, աղ. 3, նկ. 2) պատահականության արդյունք չեն, եւ ժամանակագրական քննության որոշակի հիմքեր կան: Ամերիկայից ծխախոտի գյուտը ԺԶ. դարում թափանցեց Եւրոպա, եւ այդ երկրների հետ Դիզակի առեւտրականների շփումները նպաստեցին դրանց ներկրմանը տարածաշրջան [17]:

Գեղարվեստական արտաքին ձեւավորումով եւ զարդերի մանրակրկիտ մշակմամբ ուշադրության են արժանի դեկորատիվ նշանակության փակ անոթները, որոնցից մեկը (աղ. 14, նկ. 1) զարդերի նուրբ մշակմամբ որակական նոր աստիճանի հասած խեցեգործության նվաճումներից է: Կափարիչով անոթի ուռուցիկ իրանն ավարտվում է ուղիղ լայն հատակին: Ուռուցիկ հատվածքով ձվաձեւ կափարիչը անոթի բերանը փակելու համար է: Ինչպես կափարիչը, այնպես էլ անոթը հարդարված են իրարահաջորդ մշակված գնդիկներից բաղկացած գոտիներով: Մյուս անոթն օղակաձեւ հատակով եւ դեպի շուրթն աստիճանաբար լայնացող իրան ունի: Այն բեկորային վիճակում է, եւ հատվածների բաժանված մասերից մեկի ուղղաձիգ ցանցկեն դաշտը փորագրման եղանակով է արված: Հաջորդ շեղանկյուններից բաղկացած երկրաչափական ցանցն ունի մեկընդմեջ չորսական կետազարդ (աղ. 4, նկ. 1):

Բաց անոթներից քրեղանները (աղ. 7, նկ. 1,2,3) գերազանցապես ունեն հարթ հատակ եւ տարբերվում են շուրթերի եւ իրանի ձեւավորման առանձնահատկություններով: Կան ուղիղ կտրված շուրթով քիչ լայն, դեպի հարթ հատակն իջնող պատերով տեսակներ, ինչպես նաեւ ուղիղ շուրթով երեք հորիզոնական գոտիներով ընդգծված, իրենից դեպի հատակը շեշտակի ձգվող նմուշներ: Քիչ չեն եւ ծալված շուրթով ու վերոհիշյալի նման ձեւավորվածները: Բաց անոթներից խուփերը հինգ օրինակով են հայտնաբերված եւ կիրառական տարբեր նշանակության անոթների, կարասների բերանը փակելու համար են նախատեսվել, իսկ հիմնական գործառույթն եղել է օջախը կամ թոնի-

17 Տե՛ս ***Ф. Бабаян,*** Армянские монастыри Сурб Хач и Св. Степаноса близ города. Старый Крым, Ереван, 2000, էջ 32-33:

ը ծածկելը: Սկավառակաձեւ այս առարկաներն ունեն կլոր բռնակ՝ երբեմն եղունգազարդ եզրով եւ փոսիկավոր կենտրոնով (աղ. 2, նկ. 2, աղ. 3, նկ. 3,4, աղ. 5, նկ. 2,3, աղ. 12, նկ. 2): Հնուց հայտնի կիրառական նշանակության այս առարկաները գործածվել են մինչեւ ուշ միջնադար:

Հասարակ խեցեղենի այս խումբը թվագրվում է ԺԴ.-ԺԸ. դարերով եւ տեղական արտադրության արգասիք է: Հայկական այդ շրջանի հուշարձանների պեղումների զգալի բացակայությունը թելադրում է, որ դրանց զուգահեռները փնտրենք Կենտրոնական Ասիայի եւ Ադրբեջանի պեղված հնավայրերում[18]:

Ջնարկած ու հախճապակե անոթների բեկորները որակական հորինվածքով եւ հարդարանքով երկու խմբի են բաժանվում՝ Թիմուրիդյան (ԺԴ.-ԺԵ.դդ) եւ Սեֆյան (ԺԵ.-ԺԸ.) ժամանակաշրջանի (աղ. 17, նկ. 1, 3): Դրանց զուգահեռները հայտնի են Կենտրոնական Ասիայի, Մերձսեւծովյան երկրների, Իրանի եւ Աֆղանստանի հնավայրերում[19]:

Հայտնաբերված մետաղե առարկաները սահմանափակ թվով են եւ հիմնականում աշխատանքային գործիքներ են՝ գամեր, ցակատ (աղ. 15, նկ. 1, 2, 3, 4), թիթեղյա ճրագ (աղ. 15, նկ. 5), զենքեր՝ դաշույն, նիզակ, թուր, եւ ձիու հարդարանքի պարագաներ (աղ. 16, նկ. 1, 2, 3, 6): Ճրագը կլոր ձեւավորում ունի (աղ, 15, նկ. 5), թերի է, հատակի անցքը ենթադրում է, որ այն ձողով հագորդակցվել է կլոր պատվանդանին, լուսավորության համար նախատեսված մի տիպօրինակ, որի բազմաթիվ նմանակումները հանդիպում են խեցեղեն նմուշների շարքում: Թուրը (դաշույն), որ հայտնաբերվել է պալատական սրահի տարածքում, Թ.-ԺԸ. դդ. աշխատանք է (աղ. 16, նկ. 4): Առանձին ուշադրության է արժանի տեղի դարբնոցներից մեկում գտնված նիզակը, որի դաստակին արձանագրված է «ՆԱՎԱՍԱՐԴ ՈՐԴ [Ի] ՈՀԱՆԻ» հիշատակագրությունը (աղ. 16, նկ. 7): Պալատական սրահում է հայտնաբերվել արծաթապատված ճաշի գդալը (աղ. 16, նկ. 5): Այն ավարտվող եզրի հակառակ կողմում կրում է եւրոպական երկրներին բնորոշ կնքադրոշմ, որն ապացուցում է մելիքեգանյան տոհմի առեւտրական հարաբերությունները ոչ միայն մոտակա (Իրան), այլեւ հեռակա երկրների հետ: Տեղին է հիշել Առաքել վարդապետի խոսքերը Դիզակի առեւտրականների մասին. «Ամենեքեան ընտիր վաճառականք, եւ բազմագանձ հարստութեան ճոխացեալք, ընդ ամենայն երկիրս եւ ի հեռավոր

18 Տե՛ս **Ю. Буряков, Н. Тихонин,** Раскопки керамической мастерской конца XV-XVI вв. в Шахрухи (История материальной культуры Узбекистана) выпуск 16, Ташкент, 1981, էջ 58-65, **О. Исмизаде, Ф. Ибрагимов,** О результатах археологических работ на территории Ичери Шехер в 1969 г., (Материальная культура Азербайджана), h. IX, Баку, 1980, էջ 161-173:

19 Տե՛ս **В. Вактурская,** Хронологическая классификация средневековой керамики Хорезна (IX-XVIII вв.), Москва, 1959, էջ 328-339, **И. Тихомолова, З. Понандопуло,** Албарелло городища большие кучугуры (2005, էջ 190-194. ***Mc Nicoll*** and ***W. Ball,*** Excavations at Kandahar 1974-1975 BAR International Series 641, 1996 :

քաղաքս ի տերութիւնս ցրուեալ եւ տարակայեալ իւրաքանչիւր ոք ի շահավաճառութեան պարապեալ»[20]:

Մասնավոր ուշադրության են արժանի Տողի առեւտրականների մասին Մատենադարանի արխիվներում պահպանված վավերագրերը, ի մասնավորի, Խոջա Ղազարի առեւտրական ու շինարարական գործունեության մասին[21]:

Արցախի առեւտրադրամական շրջանառության կարեւոր ապացույցներից մեկը Խոյում հատված 1592 թվականի եֆյան դրամն է, որը գտնվել է պալատական սրահի տարածքից[22]:

Տողում մելիք Եգանի պալատական համակառույցի տարածքում իրականացրած պեղումները թելադրում են հետեւյալ եզրահանգումները.

ա) Շինարարական բազմաթիվ հորինվածքներն ունեցել են գործառնական տարբեր նշանակություն: Ընդունարանը, որն ամենից քիչ էր վնասվել մարդկային տարերային շինարարական միջամտությունից, ժամանակին ծառայել է թե՛ իբրեւ ընդունելության սրահ, թե՛ իբրեւ Արցախի հարավային ծայրագավառ Դիզակի պաշտպանական ռազմական դիտակետ:

բ) Գլխատունը, որն ավերված վիճակում է մեզ հասել, այնուհանդերձ, կրում էր այդ կառույցին բնորոշ բոլոր մանրամասները՝ բուխարի, պահարանախորշեր, թոնիր, փայտե սյուների տեղադրման համար կրաքարե խորանարդաձեւ սալեր, սյունասրահ պատշգամբ եւ այլն:

Տողի պեղումների ժամանակ բացված բազմաբնակարան կառույցը բացահայտեց անցման այն օղակը, որը գլխատնից փոխանցվում էր դեպի քաղաքաստեղծ բնակարանաշինություն: Երեւույթը կապված էր քաղաքական հանգամանքների բերումով սոցիալ-տնտեսական կյանքում տեղի ունեցող տեղաշարժերով, բնակչության շերտավորմամբ, որը բերեց մեծ ընտանիքների տրոհման, բնականաբար, եւ փոքր բնակարանների պահանջարկի թելադրման: Կառուցվածքային որոշ պահպանողականությանը զուգահեռ (բուխարիներ, պահարանախորշեր) բնակարանների լուսավորությունն ապահովվում էր դռներով ու լուսամուտներով:

գ) Մինչ մելիք Եգանի հայտնվելը Տողում երկրամասը եղել է բնակեցված: Այդ ապացուցեց ընդունարանին կից բացված բազմաշերտ, տարբեր նշանակության շինությունների ավերակների գոյությունը: Բնակելի բաժանմունքները, ձիանոցը, արտադրական նշանակության կառույցները հատակագծային պարզագույն լուծումներով էին իրականացված՝ կիրառելով տարաբնույթ շինանյութ՝ կրաքար, որձաքար, խամքարաբետոնե շաղվածք եւ այլն: Այդ կա-

20 **Առաքել վարդապետ,** Դիզակի մելիքությունը (նյութեր հայ մելիքության մասին, պրակ Ա., Վաղարշապատ, 1913, էջ 12,13:

21 Տե՛ս ***Գ. Աթայան,*** Տող բերդաքաղաքի պատմությունը, Երեւան, 2010, էջ 32-33:

22 Տեղեկությունը ստացել ենք 2013 թվականին ճարտարապետ Մանվել Սարգսյանի կողմից: Դրամը որոշել է դրամագետ ***Արմինե Զոհրաբյանը:***

ռույցները նախաեգանյան համարելու ապացույցը ընդունարանի նիշի տակ գտնվելու հանգամանքն էր, ինչպես եւ ԺԴ-ԺԶ. դդ. հնագիտական նյութի առկայությունը:

դ) Մելիք Եգանի բուն պալատի սոսկ մի հատված է պահպանված, որի պեղումներով հայտնի դարձան ճարտարապետական կառուցվածքը, օժանդակ շինությունները՝ սենյակների որոշակի հատակագծային լուծումով: Հյուրասենյակն իր օժանդակ հարմարություններով՝ բուխարի, պահարանախորշեր, դուռ, լուսամուտ, պատշգամբ եւ այլն, կրում են ժամանակի շինարվեստի ու ոճի ողջ առանձնահատկությունները: Նոր հայտնաբերված 1904 թվականի՝ «Այս տունս պատկան է Արամ Բեկ Մելիք Եկանեանցին 1904 մայիս» արձանագրությամբ ապացուցվեց, որ մինչեւ Ի. դարն այն բնակեցվել է մելիք Եգանի սերունդների կողմից: Ընդհանուր առմամբ ապարանքի մնացած հատվածները ձեւափոխվել են բնակիչների կողմից ու վերածվել բնակելի նոր կառույցների:

ե) Հուշարձանի ողջ տարածքից հայտնաբերված նյութը շատ չէ, սակայն ներկայացնում է տեղի արհեստանոցների արտադրության կարողությունները, եւ բնակչության կենցաղավարման ցուցիչ է :

Ժողովրդականությունը եղել է մելիքների քաղաքականության սկզբունքներից մեկը: Լեոն այդ մասին գրել է. «Իբրեւ խոշոր եւ Արեւելյան վասալներ՝ մելիքները մեծ հարստություն էին դիզում եւ ապրում էին ճոխության մեջ՝ հետեւելով, իհարկե, պարսկական ճաշակին եւ բարձրաստիճան ավագանու նիստուկացին, բայց մնալով միաժամանակ կատարյալ ժողովրդական մարդիկ, ժողովրդի մեջ ապրող ժողովրդի հետ շփվող առօրյա կյանքի բոլոր մանրամասնությունների մեջ»[23]:

Ի մասնավորի, այդ խոսքերը մելիք Եգանին կարելի է վերագրել նրա ընդունարանի որմի արձանագրությանն անդրադառնալիս: Ժամանակի խոսակցական բարբառային լեզվով գրված վիմագրում նա առաջին հերթին հիշատակում է ժողովրդի կողմից իր քյոխվա (տանուտեր) ընտրվելու հանգամանքը.

Թ[Լ]ԻՆ ՌՃՁԶ (1737): ՅԻՇԱՏԱԿ
Է ԹԱՆԱՊԱՅԱՍ, ԱՅՍ Է, ՈՐ ԵՍ Ղ.ՈՒ-
ԿԱԶ ՎԱՐԴԱՅՊԵՏԻ ՈՐԴԻ, ՈՐ Է ԻՄ
ԱՆՈՒՆ Մ[Է]Լ[Ի]Ք ԵԿԱՆ, ՈՐ ԱՌԱ-
ՋԵԻ ԽԷԼԽՆ ՁԱՄ ԴԵՌ [ԻՆ] ԻՆՁ
ԿԱՐՔԵՑԻՆ ՔՕԽ[Ա]Յ.[24]

Այնուհետեւ նա նրանց վստահությանը պատասխանում է իր երկրից՝ նրանց գերի չտանելու համար գործադրած ջանքերով.

23 ***Լեո,*** Հայոց պատմություն, հ. 3, Երեւան, 1946, էջ 506, 510:

24 «Դիվան հայ վիմագրության», պրակ V, Արցախ, կազմեց Ս. Բարխուդարյանը, Երեւան, 1982, էջ 180-181, **Հ. Փափազյան**, Մելիք Եգանի ընդունարանի մուտքի արձանագրությունը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1985, թ. 5, էջ 76:

«ԵՍ ԹՈՂԵՑԻ ՈՉ ՀԱՅԱՍՏԱՆԱՍ ԵՍԻՐ Գ[Ն]ԱԼՈՒ ...»[25]:

Մելիք Եգանի կենսագրականը սպառված չէ: Նորագույն վավերագրերի հայտնաբերումով կլուսաբանվեն նրա հերոսական գործունեության փառապանծ դրվագները՝ հայ ժողովրդի ԺԸ. դարաշրջանի պատմությունը ինքնավորելով ազատագրական շարժման հարուստ փաստերով:

РЕЗЮМЕ

Дворцовый комплекс Мелик Егана находится в Гадрутском районе у села Тог. Комплекс состоит из нескольких сооружений разного типа – дворцовый зал, приемная, народное жилище (глхатун) и жилое помещения городского типа. В 2009, 2010, 2011гг. по инициативе управления по Туризму при правительстве Арцаха (руководитель С. Шахвердян), были организованы археологические раскопки для расчистки и реставрации памятника, для дальнейшей организации туристического центра. Во время археологических работ были обнаружены сооружения различных структур, датированные XIV-XVIII веками, а археологический материал состоял из большого количества керамических изделий, металлических орудий труда и оружия местного производства. Среди этих находок выявлены предметы из Ирана и Центральной Азии датированные в этой же эпохи.

Южный район Арцаха – Дизак – с незапамятных времян был населен армянами, а Мелик Еган в XVIII веке был великим полководцем, который сражался за сохранение самостоятельности армянского населения от иноземного владычества. Раскопки дворцового комплекса Мелик Егана в настоящее время имеет большое политическое значение.

SUMMARY

The palace of Melik Yegan is located at the province Hadrout village Togh. Before the excavations all the buildings were destroyed. Taking into account the importance of the architectural monument and to prove that armenians always the inhabitants of the region were, the Tourism department of Artsakh next to the government (Head S. Shahverdyan) undertook initiative to realize the idea and in 2009, 2010, 2011 carried out excavations at the territory. The archaelogical team of the Institute of Archaeology and ethnography of Armenia doctor (A Zhamkochyan (chief) mem-

25 Անդ:

bers doctor F. Babayan, D. Miridjanyan, Architect, M. Sarkisyan) cleaned up the area making possible the restoration of the buildings.

Based on the archaeological remains the investigation brought us to the following couclusions. The South border of Artsakh named Dizak (province) with the center Togh from very old times was inhabited by Armenians. The famous Armenian military leader Melik Yegan in XVIII century built his residence there in different structures – Armenian peasant house (գլխասուն), reception hall drawing room e.t.c. and held great struggles against Turkish and Iranian invadors to protect the independence of Artsakh. All his activities in a large inscription on the wall of his reception hall is expressed. The restoration of Melik Yegan's palace is of a decisive political significance.